

## Տ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ԽԼՂԱԹՅԱՆ

*/ավազանի անունը՝ Արմեն/*

*Ծնվել է 1971 թ. հոկտեմբերի 26-ին, Արմավիրի շրջանի Ձերժինսկու անվան խորհրդատնտեսությունում: 1978-88 թթ. նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 1988 թ. ընդունվել և սովորել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում: 1992 թ. հունվարի 18-ին Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի: 1992 թվականից ծառայել է Արարատյան Հայրապետական թեմի Արմավիրի շրջանի Բամբակաշատ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում որպես սարկավագ: 1996 թ. սեպտեմբերի 29-ին Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:*